Գտնվում է Եղեգնաձորից 12 կմ հեռավորության վրա և ընկած է Արփա գետի հովտում: Արենիի քարանձավը գտնվում է Արենի գետի ձախ ափին: Քարանձավը բաղկացած է 3 սրահներից: Քարանձավն ունի մոտ 500 մ² մակերես, որի մեծ մասը դեռևս ուսումնասիրված չէ, քանի որ տարածքը սահմանափակ է, և նոր պեղումները կարող են փակել անցումներն ու վնասել արդեն հայտնաբերված հնագիտական հուշարձանները: Քարանձավում առնվազն չորս մետր մշակութային շերտ կա: Ներքին՝ նեոլիթական շերտերը պատկանում են պղնձեքարի դարին: Հանդիպում են նաև հոմոէրեքտուսի (լատ.՝ Homo erectus) հետքեր, ովքեր բնակվել են ավելի քան երկու միլիոն տարի առաջ մեր տարածաշրջանում: Քարանձավը դասվում է կլաստոկարստային քարանձավների դասին, քանի որ ձևավորվել է կրաքարային կոնգլոմերատների մեջ: Քարանձավն իրենից ներկայացնում է մի քանի խոռոչների համալիր և ունի 400-ից 600 մ² մակերես տարածք: V դարի պատմիչ Եղիշեի մոտ այն հիշատակվում է Արպանյալ, Արպունյալ, Արբանյալ անուններով: Թռչունների քարանձավում սկսած 2007 թվականից իրականացվում են հնագիտական պեղումներ, որոնց արդյունքում հայտնաբերվել են մ.թ.ա. 4200-3500 թվականներին վերագրված բազմաթիվ գտածոներ՝ բուսական մնացորդներ, ամանեղեն, խաղողի, ծիրանի կորիզներ, եղեգից պատրաստված գործվածքներ, կանացի գանգեր, մումիֆիկացված այծի մարմնի մաս և այլն: